

**ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը Երևանում տեղի ունեցած «Աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունք» Հաշմանդամություն ունեցող երիտասարդների կենսապայմանների բարելավում՝ զբաղվածության հնարավորությունների մեծացմամբ ՀՀ Տավուշի մարզում» ծրագրի քննարկում-սեմինարին 07.11.2013թ.**

Հարգելի գործընկերներ.

Ես ողջունում եմ «Աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունք» Հաշմանդամություն ունեցող երիտասարդների կենսապայմանների բարելավում՝ զբաղվածության հնարավորությունների մեծացմամբ ՀՀ Տավուշի մարզում» ծրագրի շնորհանդեսի մասնակիցներին և հիմնական նախաձեռնող «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությանը և մաղթում արդյունավետ աշխատանք:

Տավուշի մարզի դպրոցներում ներդրվեց ներառական կրթությունը, որի համար պահանջվեց մեծ ջանքեր հասարակության մեջ ճիշտ վերաբերմունքի ձևավորման, հաշմանդամության հիմնախնդիրների իրագեկման և ներառական կրթության կարևորության գիտակցման ուղղությամբ:

Տավուշի մարզն առաջինն էր մարզերի մեջ, որ գնացել է այս քայլին և ներառական կրթությունը արդեն տվել է իր արդյունքները: Գործընթացի ձևավորման և կայացման համար պահանջվեց երկար ժամանակ և իհարկե համբերատար աշխատանք, որի համար կցանկանայի իմ շնորհակալությունը հայտնել մեր բոլոր գործընկերներին: Տրամաբանական է, որ ներառական կրթության ներդրմանը հաջորդելու է մի ծրագիր, որի նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող երիտասարդների կենսապայմանների բարելավման գործընթացին, արդյունքում ունենալով աշխատատեղեր, որոնք կզբաղեցնեն հաշմանդամ երիտասարդները: Տավուշի մարզի 4 քաղաքային և 4 գյուղական համայնքներում կհայտնաբերվեն հաշմանդամ 120 երիտասարդ, որոնց զբաղվածության հարցը առաջնային լուծման կարիք ունի: Այս Ծրագրի իրականացման ընթացքում բարձրացվելու է Տավուշի մարզում «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպության 4 կենտրոնների շահերի պաշտպանության կարողությունները՝ ի պաշտպանություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կրթության և զբաղվածության իրավունքների: Բարձրացվելու է մարզի 8 մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների ուսուցիչների կարողությունները՝ ներառական մասնագիտական կրթության և ուսուցման մեջ: Մենք ամեն ինչ պետք է անենք, որ մեր մարզի հաշմանդամություն ունեցող երիտասարդները ստանան մասնագիտական կրթություն և տեղական աշխատաշուկային համապատասխան որակավորում՝ մասնակցելով նորաստեղծ ներառական դասընթացներին, որոնք կանցկացվեն այդ 8 կենտրոններում:

Ես համոզված եմ, որ Ծրագրի գործընկերները կներդնեն իրենց բոլոր ուժերը՝ հնարավորինս լավ արդյունքներ ապահովելու համար: Շնորհակալություն: